ՆՈՐ-ԴԱՐ

№ 129 ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ. ափաթ 1 Սեպտեմբերի

1890

Հ. ափաթ 1 Սեպտեմբերի ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 129

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, 3 ամիսը՝ երեք բ. 50 կ.
ամիսը՝ 1 բ., Հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրում են Թիֆլիսում մինչև խմբագրատունը։

Խմբագրութիւնը Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ամեն օրվրից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամում։
Յայտարարութիւնների համար 2 կ., անհրաժեշտի համար կրկնապատիկ։

Սեպտեմբերի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 4 բ. 50 կոպ.։

«Նոր-Դար»-ի Հասցէն՝ Тифлисъ, въ Редакцію газеты „Норъ-Даръ“

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 7 հատ 6օթը կոպէկանոց մարկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրներ։
Քրոնիկոն.— Լուրեր Նաբեթային առևտրի մասին։ Բազումն. Վրզապետ բերդն և իր շրջակայքը։ Փամբակը։
Թղթակցութիւններ.— Ղզլար
Քաղաքական.— Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Սրեկոյեան հեռագիրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴԱՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 օգոստոսի.— Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին, Թագաժառանգը, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան և Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը երէկ առաւոտեան Լադոգա ժամանեցին և հետևորդների հետ ուղևորուեցին վինամարզութիւններին նեղակայ լինելու։

«Ֆ. Ա. Կլիմա» բանկային գրասենեակը դադարացրեց իր գործառնութիւնները Բանկի գործերի լրնկնելու պատճառը լրագիրները նրանով են բացատրում, որ իշխարկութիւնն առնելն արգելուեցան կոր կոր վճարելու պայմանով վաճառելու Վնասը յայտնի չէ։ Լուրերին նայելով, գրամարկղում 600 բ. է մնացել։

«Граждан»-ը հաղորդում է, որ հետևեալ տեղերում մտադրութիւն կայ նոր էլեատորներ չինելու՝—Ադբլանտում, Սեաստոպոլում, Թէոդոսում և Սև ու Ազովեան ծովերի և նաւահանգիստ գետերի ուրիշ նաւահանգիստ քաղաքներում։ Չնայած նարկողը հարաւային հողատէրերի ընկերութիւնն է 25 միլիոն բուբլու օբլիգացիօնական դրամագլխով։

«С.-Пб. Вѣд.»-ն լսել է, որ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը նախագիծ է կազմում Բէրդեանսկում նաւահանգիստ չինելու։

ԿԻՎ, ԵՐՅԳ.— Այսօր վինամարզութիւնների ժամանակ ջրային կաթսաներից վախճանուեց վլադիմիրեան հետևակների 3-րդ գօրաբաժնի հրամանատար գնդապետ Լեհտմանտ Բի գամսկին։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՕՐՕԴ.— Նաբբ մահուդի առևտուրն ընդհանրապէս վատ չէր ծախւում էր դլխաւորապէս յայտնի գործարանների մահուդն և անցեալ տարուայ գներով։ Լօճի մահուդի առևտուրը վատ էր. գնողները նախատրում էին Մօսկուայի մահուդը։ Ոչխարի մորթը շատով էր վաճառուում։ Սիբիրի մորթերը՝ սկիւռինը 30-ից մինչև 45 կ., կղնաքիսի իւրաքանչիւր մորթը, առանց պահանջի 3-ական բ., սաւերը՝ Ամուրինը 7-ից մինչև 10 բ., Եակուտսկինը մեծ գումարով 20-ից մինչև 25 բ., սկիւռի պոչերը 50% էժան։ Սիբիրի աղուէսի մորթը—4½ բ., գայլինը—3 բ., արջի-

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 օգոստոսի.— Մօսկուայի ընդհանուր նահանգապետ իշ. Դոլգորուկովին իբր նեղիայ պաշտօնում ծառայելու 25-ամեայ յոբելեանի առթիւ Անդրկի ժողովէնի վրայ պատմանդանով զարդարուած Ալէքսանդր II-ի և Ալէքսանդր III-ի պատկերը Ցարեվոկոքշայսկի կառավարչապետի խորհրդի անդամներին Պրեբրիլին և Պէչատովին ս. Ալէքսանդր Նևացու չքանչան է շնորհուած։ Կովկասի կառավարչապետ Շեր. մետևին ս. Ալէքսանդր Նևացու պատմանդեայ նշաններ են շնորհուած. Կովկասի զօրաբաժնի հրամանատար իշ. Ճաւճաւաձէին ս. Ալէքսանդր Նևացու չքանչան, Քութայիսի գիմնազիական Նահանգապետ Գրօսմանին ս. Աննայի I աստ. չքանչան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

28 օգոստոսի

Լօնդոն 89,10 բ., 88,60 բ., 89, բ.
Բերլին 38,85 բ., 38,⅝ բ., 38,80 բ.
Պարիզ 31,30 բ. 31,20 բ. 31,30
Պօլտ իմպերիալ . . . . . 6 բ. 42, կ. սակ.
Մաքս. կուպօն . . . . 127½ բ. — կ. սակ.
Արծաթ . . . . . 1 բ. 11 կ. գն.
Բօքսային դէս . . . . . 5 և 6%
Գետակ. բանկի 5%. առժ.
1-ին շրջանի. . . . . 100,87 բ. — կ. սակ.
2-րդ . . . . . 100,37 բ. — կ. սակ.
3-րդ . . . . . 100 բ. — կ. գն.
4-րդ . . . . . 100 բ. կ. գն.
5-րդ . . . . . 100 բ. — կ. գն.
6-րդ . . . . . 100 բ. — կ. գն.
100 և 1000 բ. արեւելեան փոխառութեան 5% առժեր.
1-ին շրջանի. . . . . 101,¼ բ. — կ. գն.
2-րդ . . . . . 101,⅛ բ. — կ. սակ.
3-րդ . . . . . 102, բ. — կ. սակ
Առաջին 5% ներքին փոխառութեան. առժեր . . . . . 228 բ. — կ. գն.
2-րդ . . . . . 217% բ. — կ. սակ.
Երբորդ փոխ. Ա.գն. հզ.
բանկէ . . . . . 211, բ. — կ. սակ.
5%% ըշեաեր . . . 104,37 բ. — կ. սակ.
Թիֆ. քաղ. վարձի ընկեր.
օբլիգ. . . . — — կ. գն.
Բօրսայ ընթերցասրահութիւնը խաղալ է։

(Երեկ. հեռ. տես չորրորդ երես)

ՔՐՈՆԻԿՈՆ

Հինգշաբթի, օգոստոսի 30-ին, Թագաւոր Կայսրի անուանակոչութեան օրը, Վանքի աւագ եկեղեցում հանդիսաւոր մաղթանք կատարուեց։ Նոյնպէս հանդիսաւոր մաղթանք կատարուեցաւ Սիօնի աւագ եկեղեցում, մանկահասակների մկրտութեան և հրէաների սինագոգում։ Քաղաքս այդ օրուայ առթիւ զարդարուած էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորուած էր ճրագներով և գունաւոր լապտերներով։

—

Օգոստոսի 30-ին, հինգշաբթի, օրուայ ժամը 4 ից 5 րոպէ անց Մցխէթի կայարանից արտակարգ գնացքով Թիֆլիս կայարանը ժամանեց ֆինանսների մինիստր իսկական գաղտնի խորհրդական Իվան Ալէքսէևիչ Վշնեգրադսկին։ Թէպէտև պ. մինիստրին երեկոյեան էին սպասում, այնու ամենայնիւ պաշտօնական մի քանի անձինք հանդիսաւոր համազգեստով դիմաւորելին նրան։ Ինքը պ. մինիստրը մի քաղցր և բարի դէմքով ծերունի է և իւր պարզ ու անպաճոյճ վարմունքով իսկոյն գրաւեց ամենքի համակրութիւնը։ Այն րոպէին, որ գնացքը կանգ առաւ, ամենքի աչքերը յառած էր դէպի այն վագոնը, որտեղից պէտք է դուրս գար պ. մինիստրը, չգիտենք թէ ինչպէս նա արդէն առաջուց իմացել էր վագոնից և ամբոխի մէջ անհնարաւ անցնելով արդէն իջած ևսել էր ողջունել այս և այն պաշտօնական անձերին։ Պ. մինիստրի հետ ի միջի այլ պաշտօնեաների Թիֆլիս եկան Երևանի նահանգային գլխաւոր իսպետոր Վ. Իսահակեան։

—

Լսում ենք, որ Թիֆլիսի վեցդասեան պրօգիմնազիայի նոր լեզուների ուսուցիչ Ֆրիդրիխ Բոռնովիչ Կրէյսբէրգը նշանակուած է Սէրպուխի Արիստովայի օրիորդաց գիմնազիայի ուսումնական մասի կառավարիչ։ Ցոյս ենք անում, որ դրա շնորհիւ ուշադրութիւն կը դարձնուի նոր լեզուների դասատուութեան վրայ և իրրև այդ առարկաների յայտնի ու փորձած ուսուցիչ կարող է իրագործել այն ծրագիրը, որը դրած ունի այդ գիմնազիան—պատրաստել նոր լեզուների վարժուհիներ միջնակարգ ուսումնարանների համար։ Պ. Կրէյսբէրգը յայտնի է և իբրև հեղինակ ֆրանսիական դասագրքի, որը այժմ ընդունուած է իբրև ձեռնարկ կովկասեան ուսումնական շրջանի շատ վարժարանների համար։ Հաստատ ազբիւրից տեղեկանում ենք, որ առանձին ուշադրութիւն է դարձրել պ. Կրէյսբէրգը ուսումնարանի դասատուից յարմարութեան վրայ և այդ նպատակով նորոգել է առել չինութիւնը։ Ապրենք և կը տեսնենք։

—

Յայտնի է, որ Թիֆլիսի հասարակ ժողովրդի մէջ սովորութիւն կայ բնաւանքար գանազան իրեր, օրինակ ժամացոյց, մատանիք, հարմանիկներ, կարեվքնաներ և այլն, վիճակախաղ դնել, որի համար փողոցէ փողոց, թաղէ թաղ, անէ առն են ման գալիս և ղրուշներ հաւաքում։ Երբեմն այդ վիճակախաղն անազին հրաւէրքի ձև է ընդունում, որի ժամանակ հարիւրաւոր կանայք նոյն իսկ տղամարդիկ են հաւաքում և թէ են խառում, մրզ ասում, պարսում, եթէ միայն վիճակախաղի առարկան թանկագին է լինում և շատ փող հաւաքուած։ Այդպիսի մի վիճակախաղ տեղի ունեցաւ օգոստոսի 26-ին, կիրակի օրը, Ջուղայեցիների, որի առարկան մի ոսկէ մատանիք էր։ Այդ վիճակախաղին դաշոյնիներով պարում էր մի վրացի երիտասարդ, որ հաւաքուած ամբոխին իւր չնորհքն էր ցոյց տալիս, ամբոխը հիանում և ապրանում էր, երբ յանկարծ պարողը դաշոյններից մէնն անզգուշութեամբ ցցեց իւր ազդրի մէջ և...հանդէսը վերջացաւ։

—

Հինգշաբթի, օգոստոսի 30-ին, Թիֆլիսի թատրոնում տեղի ունեցաւ օպերայի խմբի այս սեզօնի առաջին ներկայացումը։ Ինչպէս միշտ, այս անգամ էլ առաջին ներկայացումը «Жизнь за царя» օպերան էր։ Խմբի անդամները մի երկու բացառութեամբ, բոլորովին անծանօթ են Թիֆլիսին։ Այդ գիշեր ներկայացմանը ներկայ էր ուսաց ֆինանսների պ. մինիստր Վշնեգրադսկին։

—

Ստացանք «Начальная книга русскаго языка для армянскихъ школъ» նոր դասագիրքը, որ կազմել է Գ. Թումանեանցը և հրատարակել Նիկոլայոս Տէր-Ղևոնդեանը։ Դասագիրքը տպուած է Թիֆլիսում, Մ. Վարդանեանցի տպարանում, տոն 1890 թուին և արժէ 25 կոպէկ, որ, պէտք է ասած, էժան է։ Բայց մի նկատողութիւն. մենք տամարեա ոչ մի դասագիրք չունինք, որի մէջ ազգագրական սխալներ չլինեն, ինչպէս յիշեալ դասագրքի մէջ է, այն ինչ դասագրքերը, մանաւանդ առաջին տարուայ դասագրքերը բոլորովին առանց սըխալների պէտք է լինեն, որպէս զի նոր ամբողջ աշակերտները չմոլորուեն, իսկ այսպիսի աշակերտները ամեն մի սըխալից շատ շատ են մոլորում։ Սակայն յիշեալ դասագրքի մէջ սխալները շատ քիչ են և չնչին։

—

Անցեալներս մենք հաղորդել էինք, որ Բազումի միապետութիւն կայ հայկեղէն «Սայլակ» անունով մի չափաթաթերթ հրատարակելու. այժմ «Кавк»-ն հաղորդում է, որ այդ միապետութիւնը թողուած է։

—

Իտալական երաժիշտ Ֆրանչիսկո Բասէրը, որ յայտնի չափով նաւագող է, իւր առաջին կօնցերտը տուեց բանկի թատրոնում օգոստոսի 29-ին և ամբողջութիւն ունեցաւ, միայն թատրոնի դահլիճը ժողովարար դատարկ էր։

—

Ինչպէս յայտնի է, անա մի չափաթ չարունակ այրուում էին Բօյմօյի ան տառները, որոնք պատկանում են Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչին։ Այժմ տեղական թերթերին հաղորդում են, որ հրդեհն արդէն վերջացած է, նորին մեծութիւն գնացած ծովերի և մանաւանդ առատ անձրևի։

—

Կիրակի, օգոստոսի 26-ին Մուշայիդի այգում գետի ափին անձնասպանութիւն գործեց մի առա սպայ Ալէքսանդրը Լէչով անունով։ Պատճառն այն էր, որ նա մեղադրում էր իւր գլխաւորներին վիրաւորելուն համար և միւս օրը Կովկասեան պիոներական դասատրանում պէտք է քննուէր նրա գործը։ Նրա գրպանում երկու տուփակ են գըտել, մէնն իւր ընկեր սպայի անունով, որին վերջին տրամիչան է տալիս, միւսն առանց հասցէի է և դրա մէջ գրած է, որ իւր մարմինը չանպանատանն, որովհետև գրան կարիք չկայ։

—

Թէպէտև արդէն օգոստոս ամիսը վերջացաւ և գրեթէ ամենքն ամարանոցներից վերադարձած են և սեպտեմբերի 1-ին դպրոցները բացւում են, բայց այժմ Թիֆլիսում ուելի շոգ է և անտանելի շոգ քան երբ և իցէ։ Ինչ միտք ունի ամարանոց գնալը, եթէ վերջը պէտք է կիզիչ արեգակի տակ այրուելով քաղաքիս փոշին ներշնչել։ Ոչքան շոգերն անտանելի են, նոյնքան հրեսի վրայ է ձգտում քաղաքիս փողոցների մաքրութիւնը։ Միմիայն երկինքը կարող էր յորդահոս անձրևով ու ժամանակ ազատել մեզ փողոցների փոշիից, երկինքն այդ էլ խնայում է մեզանից։

—

Մուշայիդի այդին քաղաքիս բնակիչների համար համարեա միակ զբօսավայրը լինելով, կիրակի երեկոներն ահագին բազմութիւն է հաւաքւում այնտեղ։ Մանաւանդ հիմայ, երբ ամարանոց գնացողներն էլ վերադարձել և հետզհետէ վերադառնում են։ Բայց պէտք է ասած, որ ոչ մի կիրակի չէ անցնում, որ այդտեղ «բարիշնիանքի» պատճառով անկարգութիւններ տեղի չունենան. այսպէս կիրակի, օգոստոսի 26-ի երեկոյեան մի «բարիշնեակի» համար մի քանի երիտասարդի միջև անգին կռիւ և զարհուրել եղաւ. ձեռնափայտեր, աւե-

ներ և սրեր խաղացին, բայց ժողովուրդը մէջ ընկնելով, կարգը վերականգնեց առանց մէկին վնաս հասնելու։

—

Կիրակի, սեպտեմբերի 2-ին «Իտալիա» այգում լինելու է գոտեմարտ, որտեղ յայտնի ըմբիշ Մինդրէլ Նէստորէ Էքսէի և միւս ըմբիշների միջև գոտեմարտ կլինի, որի ընդհանուր մուտքից 10 նուիրւում է Հալաթարի Ս. Էջմիածնի եկեղեցու օրիորդաց ուսումնարանին։

—

ՄԵԾ-ՔԵԱՓԱՆԱԿԻՑ. — Այս վերջը գտնւում է Ալէքսանդրապոլ քաղաքից 16 վերստ հեռու դէպի արևելա-հարաւ։ Ունի 212 տուն, երկու քահանայ և մի ուսումնարան, որ չունենան օրից մինչև այսօր միայն երեք տարի է անցել, և ահա այս հինգերորդ տարին է, որ փակուած և ամերակ է մնացել ընորհիւ տանուտէր Մ. Տ. Ս-եանցի խոովայղղ բնաւորութեան, որ միշտ իւր չահասիրութեան պատճառով մեծ աղմուկ է յարուցում խաղաղ չինականների մէջ. վերջիններս ահա երկրորդ տարին է, որ զզուելով նրա անտանելի վարմունքից, ստիպուել են նրա անկանոն և ապօրինի արարմունքի մասին խնդրագրով լինել ուր հարկն է։

Մօտ օրերումս մի զժբաղդ դէպք պատահեցաւ այդ գիւղում. կէսօրին մօտ արևմտեան կողմից փոթորիկսառն ամպերը բարձրանալով Ջաջուռի լեռնաշղթայի վրայ, սարսափելի կարկուտ տեղացին Փամպի և Ապարանի սարերի վրայ, մի քառորդ ժամում դեռ չը հընձած արտերը ոչնչացան։ Գիւղացիները յուսահատութեան մէջ են։

Այդ մի սովորական բնական հարուած է, որ կրկնւում է միշտ կրում է թշուառ հողագործը։ Կարկտից առաջացած հեղեղն զոհ գնաց գիւղիս անչէջրը (հորթարած)։

Կարկտաբեր ամպերը վրայ հասնելու ժամանակ այդ մարդն իւր տոթերով մի ծմակում ապաստան է գըտնում մինչև կարկտի վերջանալը. ծմակը յանկարծ լցւում է հեղեղի ջրով և հորթարածն իւր վրայով տոթերով խեղդւում։ Նոյն օրը ամբողջ դին գտել են գիւղին մօտ մի ջրանցքի եզրում. Ութ կնոջ հետ մնացել է նաև վեց տղի երեխաներ, որոնք բոլորովին անտէր, անխնամ են մնացել։ Մեր գիւղացիների բարոյական պարտաւորութիւնն է նրանց կարելոյն չափ օգնել։

—

ՇԱՄԱԽԻՑ.—Վանքաչինացի 22 տարեկան մի հայ, Սալիանի մօտ գտնւող մի թուրք գիւղում թլիփատելով մահմեդականութիւն է ընդունել։ Սալեանի ոստիկանութիւնը բռնել է այդ տղային և էստպել ուղարկել է Շահախտ կոնսիստորիային։

—Գ. գաւառապետը, ասում են, ստորագրութիւն է առել քաղաքիս բողոքական եկեղեցուց, որ մինչեւ քարոզիչները քարոզներ չկոսեն այլ եւս այդ եկեղեցում։

—

ԳԱՀՍՐԻՑ.— Մեզանում այս օրերս մարդասպանութեան երկու դէպք պատահեց. պարսիկների «Շահսէից» յեղոյզ, անյայտանում է մի 17 տարեկան պարսիկ. մի քանի օրից յետոյ նրան խեղդուած են գտնում։

Իսկ դրանից մի երկու օր յետոյ, երկու պարսիկ եղբայրներ, Քերբէք գեղի ախով գնալիս, մեծ եղբայրը հանում է ատրճանակն և ալիճակում փոքր եղբօր վրայ, բայց բարեբաղդաբար չի յաջողում սպանել. չարագործը իր նպատակին հասնելու համար, բռնում է եղբօրը և դաշոյնով երեք տեղից հարուածում. տալիս վիրաւորուածը մի 13 տարեկան պատանի էր, որին տուն տարան. յայտնի, որ տալիս Չարագործը խոստովանուել է, որ վերոյիշեալ խեղդուածին ինքն է խեղդել, որովհետև իբր աւելալ, թէ իբր եղբօրն և թէ խեղդուածին անբարոյական գործերով է պարապելիս տեսել։ Այն ինչ փոքր եղբայրն ասում է, որ ինքը սպառնացել է, թէ կը յայտնէ, որ անհետացած տղային նաև մեծ եղբայրն է խեղդել և այդ պատճառով մեծ եղբայրը նրան ուղեցել է սպանել, որ և չի աջողուել, որովհետև մարդիկ են վրայ հասել։ Մարգասպանն ինքը գնաց ոստիկանութեանը յայտնելու, որտեղ և ձերբակալեցին նրան։

—

ՇՈՒՇՈՒԻՑ.—Այս վերջերս Հայոց Բարեգործական ընկերութեան օգտին տուած ներկայացման մասին պատուական «Նոր-Դար» ի № 125-ում քրոնիկոնի յամառօտած տպագրուած տողը բոլորովին սխալ է, որի համար չարժէ խօսել, միայն կարելի չէ չնկատել, որ ներկայացման բուկըլզնապատմառը ոչ թէ պ. Ն. Տէր-Կարապետեանցն է եղել, ինչպէս հաղորդել է լրատուն, այլ ա. ա. Ն. Եսայեանցն, Մ. Գափեանը, որոնց շնորհիւ ներկայացմանը մասնակցող օրիորդները բեմ բարձրացան, և պ. Ե. Ձաղարբէկեանցը։

—

ՇՈՒՇՈՒԻՑ.—Օգ. 22-ին, գիշերուայ ժամը 2-ին, քաղաքիս առաջին թաղում պ. Ա. Աթաքել Խաչատրեանցի երեք-յարկանի տան տանիքը կրակ ընկաւ։ Այդ մի ջոջերն, երբ մեր ոստիկանապետը գիշերապահ ոստիկանների հետ ման է եղել գալիս փողոցները, նկատում է հրդեհի լոյսն և իսկոյն գիշերապահների հետ օգնութեան է վազում։ Հրդեհը չուտով հանդցրին։ Ոստիկանապետը հետաքրքրուելով հրդեհի պատճառն, իմանում է, որ նոյն գիշերն այդ վողոցով մի ոսկերչի աղջկայ պակ անելու ժամանակ, ֆշտիք են կրակ տալիս, որի մի պատրոյգը վառուած ընկնում է այդ տան տանիքը և հրդեհը դրանից է ծագում։ Պ. ոստիկանապետը, չատ անդամ զգուշացրած լինելով, որ հարսանիքներում ատրճանակ չարձակեն կամ ֆշտիք չվառեն, խիստ ազդարարութիւն է կատմում, տալիս պահպանարար զգուշութիւն, և զգուշութիւն այն անձերին, որ այսուհետև հարսանիքներում ոչ ատրճանակ արձակեն, ոչ ֆշտիք վառեն, ինչպէս անցեալ տարիներ մի հարսանիքում մէկին ատրճանակով գնդակահար արին։

Ղզղալայ հայաբնակ գիւղում, չուչեղի բաղքաքաղաքներից մինը՝ Գևոնդ Անտոնեանց անունով, որ ահա երկու չաբաթ է, իբրև հիւր գնացել է այնտեղ, կարողացել է գիւղացիներից մէկին որպէս բողոքական դարձնել և այդ մէկին զարձնելուց յետոյ, դուբս է եկել գիւղը հաւաքել քարոզել։ Գիւղացիները ուզում են նրան դուբս անել, բայց նա ասում է, որ ինքը դեռ լաւ չի կարողանում քարոզել և չուտով բերել կըտայ իրենց վարժապետին, նա կը հալի կածի գիւղացիների գլուխները։ Գիւղի քահանան այդ մասին իսկոյն յայտարարութիւն է գրում ուղարկում Թիֆլիս գեր. առաջնորդին։ Վերջինս իսկոյն պաշտօնական թուղթ է գրում գաւառապետին և եղելութիւնը յայտնում, իսկ օգոստոսի 28-ին նորընծայ Մեսրոպ քահ. Ապրեսեանցին, որը կոնսիստորիայի անդամ է, ուղարկում է, որ գործերը քննի նոհանդական դատարանին տալու համար։ Սակայն չիշեալ բողոքականը, ոչ ոքից երկիւղ չիրելով, ձի է ուղարկել իրենց վարժապետի համար, որ դա գայ և սկսէ քարոզել Ղզղալայ գիւղում։

—

ՍԱՂԵԱՆԻՑ. — Պատուական «Նոր-Դար»-ի № 113-ը էլ չէ հանգստանում— անդադար ձեռքից ձեռք է անցնում Սալեանի վերբաթիվ ընթերցողների չրջանում։ Խումբ-խումբ անդրագէտներ էլ են խնդրում, որ իրենց համար ևս կարդան պ. Ռ-ետաւորի «Ինչ օրումն է Սաղեանի վանքը» խորագրով յօդուածը։ Իբրահիմբէյի ճնշած սրտից, կարծես, մի ծանր բեռն է դըրուում, այնքան նրանց զգացածն է պատճառում այդ նամակը։ Դեռ տրտնջում են, թէ ինչու վանքի արդիւնքների թուում ս. մատնքների արդիւնքն էլ չէ յիշուել։

— Պ. Ռ-ետաւորի նամակը ազդեցութիւն ունեցաւ։ Աղիս—լան են կարել տալիս,—որ այդ նամակում մատնացոյց է արած,—վանքի հովանաւոր կողմն չի նամբիլը յայտնելու ուսումնասիրանի համար։ Յանկարծ է, որ Թիֆլիս

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Փոփոխութիւն 34 յօդուածի

Ընդունուած է յանձնաժողովի կողմէ հետեւեալ փոփոխութիւնը 34 յօդուածին.

Փոխանակ ներկայ յօդուածի ամբողջ բովանդակութեան՝ հետեւեալ փոփոխութիւնը.

Ամէն մի ընտրող իրաւունք ունի ընտրելու միայն մէկ ընտրողական ցուցակ, որ ներառնուած է ընտրական շրջանի ընտրողական ցուցակներուն մէջ։

Ընտրողական ցուցակ կազմելու համար ընտրողը պարտաւոր է ներկայանալ ընտրողական ցուցակներ կազմող յանձնաժողովին անձամբ կամ իր գրաւոր լիազօրութեամբ ներկայացուցիչին միջոցով։

Ընտրողական ցուցակ կազմելու համար ընտրողը պարտաւոր է ներկայացնել իր անձնագիրը կամ ծննդեան վկայականը, կամ ուրիշ որեւէ փաստաթուղթ, որ կը հաստատէ իր ինքնութիւնը։

Ընտրողական ցուցակ կազմելու համար ընտրողը պարտաւոր է ներկայացնել նաեւ վկայական մը, որ կը հաստատէ, թէ ան ապրած է ընտրական շրջանին մէջ առնուազն վեց ամիս

ւարարութիւն տալ եկեղեցու վերաբերմամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

(Լօռուայ կեանքից)

Երկու աչք զալիս են Աքորիս Բոլոր գիւղացիք հաւաքւում ենդոր նրանց հետ խօսելուն անենք Մեր գիւղացիք չատ են սիրում այդպիսի դէպքերում իրենց չքնորհքը ցոյց տալ Խոկոյն «քաս» են մանում աչքների հետ, որ նրանց կապեն ու սպները ձեռներիցը խլեն Շրլինգները երկարացնում են, խօսքերը ծամծմում, բան չէ դուրս գալիս Սրբանց շէյխ ու գոլական Սերգօն սարսում է լինում. վազ մարդ են ուղարկում նրա ետևից. գալիս է Սերգօն ու յանդգնութեամբ «մէչլիսում» վեր գալիս Աքորեցիք հիացմամբ ընդունում են նրան և իրար մէջ քչփչում. «Չանէ սան Սերգօ, հրէս աչքների թաք ու մութը ցմաքացնել պտի հա»....

Սերգօն լօռերցու ինքնավստահութեամբ սկսում է ու ձայնը գլում.

Սարն քաշէք
Կանանչ խոտ գըտէք,
Քէչլէն էդնուշէք
Դանկի կոթ օլար...
— Ջան, ջան, ձէնիդ մատաղ, համ թէ ասիր հա, ըմէնց կապի դրանց է....

Աչքները զարմացած էլին մնացել, վերջը մէկն ասում է ընկերոջը.

— Սրանք հենց աւանակներ են եղել. Աքորեցիներից ոչ ոք չի հասկանում. նրանցից մինը խնդրում է աչքին.

— Ուստա ջան, ասածդ ընչին են ասում.

— Աւանակն ասում են խելօք մարդկերանցը, հեգնում է աչքը.

— Հէ՛, ինչ ես ասում, ուստա. մենք հլա ինչ ասածդ ենք, ասածդ որ մեր պապերն ին ...

**

— Թուրք ուղտապանն մի ուղտը ճանապարհին բեզարում է, բերում է մի լօռեցու պահ տալիս Լօռեցին մի օր տանում է ուղտը ձորի գլխին արածացնելու. ուղտը ձորն է ընկնում. Մի ժամանակից ուղտապանը գալիս է իր ուղտը պահանջում. Սակայն ոչ ոք չի լինում, որ խուրջերն հասկացնէ եղելութիւնը. Վերջը ձորիցը կանչում են բիձա Համբոյին, որ երևելի թրքադէտն է եղել. վերջինս բացատրում է.

Թուրք զարդաչ ջան, ասն ուղտը թափ տուած օղլի իր բուրջը. Քարի գլխին կաս կրծլադի, ջուխտ ուռով սօթ պրծլադի, թէ հրատում չես, բան բաչի, բաս կաշի. էդ էլ խատերան ափար, խատերան բաչխի....

**

Բիձա Համբոն մի օր գնացած է լինում անտառը, ուր որսած է լինում երկու հատ սալաֆնէչ (կաքաւներ), որոնցից մինը սալ է լինում, միւսը սատկած. Ճանապարհին պատահում է մի զրահաւորուած թուրքի, որից բաւական վախենում է. Թուրքը բարևում է.

— Ա՛յ սոյմ ալաք....

Բիձա Համբոն և չփոթւում է և զարմանում, տալիս է սատկած սալամը թուրքին՝ կարծելով, թէ թուրքը սալամն է ուզում.

Թուրքը չնարհակալ է լինում ասելով. — Սաղ օլ, սաղ օլ.

Բիձա Համբոն դժգոհութեամբ և վախեցած հանում է խուրջինից սաղ սալամն էլ և տալիս թուրքին վնխփընթալով.

Տօ, թուրքն ինչ գիտէր, թէ ես սաղ սալամ էլ ունէի... այ, զարմացք....

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հէ—սէոյին գործակալութենից)

—

ՐՈՎՆՕ, 29 օգոստոս. — Նոցին Կայսերական Մեծութիւնները և Նոյին Բարձրութիւններն երկաթուղով Օգերեան կայարանը գնացին, որտեղից կառքերով գնացին Վարկովիչի գիւղը, որտեղ գտնուում է Վօլընի զօրքի առաջին գիծը։ Երկաթուղու Օգերեան կայարանում չեխական պատգամաւորներն արժանացան Նոցին Մեծութիւններին աղ ու հաց մատուցելու։ Կրլով գիւղը գնալով, Նոցին Մեծութիւնները բարձրացան ծէրնովա լեռը, որտեղից և գիտեցին գինամարզութիւնները։ Կէս օրին մօտ այնտեղից իջնելով, Նոցին Մեծութիւնները բարեհաճեցին ճաշել գիւղական առաջին պատահած խրճիթում,

ՏԱՇՔԵՆՏ. — Այսօր հանդիսաւոր կերպով բացուած է Թուրքեստանի գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդէսը։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անցեալ տարի մամուլի միջոցով մի յայտարարութիւն տպուեց Արչակ Թումանեանի «Աբրեցող և Տաք Սէր» վէպի լոյս տեսնելու մասին, սակայն հեղինակն հանդիպելով ամենաանսպասելի արգելքների՝ անզօր եղաւ իւր այդ խոստումը կատարելու և գիրքը մինչև այսօր Մեզ առանց տպագրութեան։

Այսօր յիշեալ գրքի բաժանորդներին յայտարարում ենք, որ այդ գիրքն արդէն յանձնուած է տպագրութեան և անչուշտ լոյս կ'տեսնի սեպտեմբերի վերջերում։ Մինչդեռ հեղինակի «Ձակատի գըրուածքը չի ընջուլ» գրքերն էլ չուտով կ'տարածուին և կ'ուղարկուին բաժանորդներին։

Նիկ. Աբրահամ.

Բագու
20 օգոստոսի

ՇՈՓԵՆԱՒԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Սև ծովի վրայ

Բաթումից գնում են՝

Երեքշաբթի օրերը, երեկոյեան ժ., ուղիղ գծով, Սուխումի և Նովօրոս սիչակի վրայով։

Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովօսսիչակի վրայով։

Շաբաթ՝ օրերը՝ երեկոյեան 8 ժամին, չոքանաւու գծով, բոլոր նաւահանգիստներով։

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտաւահմանեան գծով, դէպի Կ. Պօլիս

Բաթում գալիս են

Երկուշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտ, ուղիղ գծով, Կերչի և Նովօրոսսիյսկի վրայով։

Ութշաբթի օրերը՝ երեկոյեան, չրջանաւու գծով։

Կիրակի օրերը՝ առաւօտը Կ. Պօլսից։

Ծանօթութիւն. Ուղիղ գծով եկող այն նաւերը, որոնք վերադարձին մանում են Սուխում և Նովօրոսսիյսկ, Նովօրոսսիյսկից դուրս կը գան երեկոյեան ժամը 5-ին, որպէս զի Նովօրոսսիյսկի երկաթուղու գալուն յարմարին։

Փոթի գալիս են

Սուխումից՝ երեքշաբթի օրերը։
Բաթումից՝ հինգշաբթի, չորեքշաբթի, երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Փոթիից գնում են

Բաթում՝ հինգշաբթի օրերը։
Անապա՝ ուրբաթ օրերը։

II Կասպից ծովի վրայ

Բաքուից գնում են

Դերբենդ, Պետրովսկ և Աստրախան՝ չորեքշաբթի, ուրբաթ և չաբաթ օրերը, ցերեկը ժամը 1-ին։

Ուզուն-Ադա՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5-ին։

Լէնքօրան, Աստրա և Էնզելի՝ երկուշաբթի օրերը, ցերեկը ժամը 1-ին։

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացք թիֆլիս-կէյ-է

Բաթումից, պատ. 11 ժ. 8ր. եր.
Բագուից, » 7 ժ. 40 ր. առ.
Բաթումից, մար. տար. 8 ժ. — ր. առ.
Դանէակից, » 8 ժ. 20 ր. երե.

Գնացք թիֆլիս-կէյ-է

Բաթում, պատաչին. 8 ժ. 40 ր. առ.
Պահաջ » 12 ժ. 8 ր. գիչ.
Ջաթում, մար. ապ. գն. 3 ժ. 10 ր. ց.
Դանձակ, » 9 ժ. 45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. երե.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և չաբաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

I Ռօստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Ռօստով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Ռօստովից գնում է 7 ժ. 28 ր. եր.
Վլադիկաւկազ գալիս է 7 ժ. — ր. եր.

Երթևեկութիւն Թիֆլիս Վլադիկաւկազի միջև մինչև նոյեմբերի 1-ը։

Թիֆլիսից գնում են՝

Երեքշաբթի առաւօտեան ուղիղ գծով, ժամին 7 ժամին. գնշերում է Դուշաւը կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 5-ին հասնում է Վլադիկաւկազ։ Նոյնպէս Թիֆլիսից գնում է առաւօտեան ժամը 9-ին, նիշերում է Ալխազում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում է Վլադիկաւկազ։ Վերադարձող գնացքները գնում են նոյնպէս առանց գիշերելու միւս օրը երեկ. 8 ժամին հասնում է Վլադիկաւկազ։

Վլադիկաւկազից գնում են գալիս

Երեքշաբթի առաւօտեան ուղիղ գծով 7-ին գիշերում է, Պատանաւր կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Թիֆլիս։ Միւսը գնում գալիս առաւօտեան 9 ժամին, գիշերում է Ալխազում և միւս օրը երեկոյեան 8 ժամին հասնում է Թիֆլիս։ Վերադարձող օմնիբուսները երեկոյեան ժամը 4-ին, գիշերը չէ կանգ առնում և միւս օրը երեկոյեան 7 ժամին հասնում է Թիֆլիս, միւսը գնում է գալիս ընկոյեան 5 ժամին, առանց գիշերելու, միւս օրը երեկոյեան 9 ժամին 50 ր. հասնում է Թիֆլիս։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐ. ՍՋ. ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ
Կէրչէ, սեպտեմբերի 2-ին
տեղի կունենայ
ԼԻԼԻՊՈՒՏՆԵՐԻ
Խմբի ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ.
Կը ներկայացուի
НА ЛОВЦА И СВѢТЪ БѢЖИТЪ, վօդ. 1 արարուածով։

Մեծ զաւեշտ՝ բաղկացած կը լինի երգերից, պարերից, դէ-էքսներից և քալեքսներից։

Փոքրիկ դերասանների հաստակը ամենակարճը 18 վերշոկ է։ Լիլիպուտների խումբը հրաւիրուած է ընդհանը հինգ ներկայացման համար։

1—1

50—33

ՕՐ. ՆԱՏԱԼԻԱ և ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐ-ԲԱԶԴԱՍԱՐԵԱՆՑ, ԱԻԱԳ ՍԱՐԳԱԻԱԴ ԴԻՈՆԷՍԻՈՍ ՂԱՄԱՋԵԱՆՑՆԵՐԸ և քոյրերը յաւէտ սրտի յայտնելով առաջինները իրենց անմոռանալի հօր, իսկ երկրորդները իրենց եղբօր՝ Հալէպաբերի էջմիածնեցոց եկեղեցու միաբան

ՐԱՂԴԱՍԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՄԱՋԵԱՆՑԻ

մահը, խղդուած են բարեկամներին, ծանօթներին և ծխականներին չհարց բևրել թաղման հանդիսին, որ լինելու է չաբաթ սեպտեմբերի 1-ին։

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՋՐՄՈՒՂԻ ԳՐԱՄԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ինչպէս Ջրմուղի շահերի նոյնպէս և Թիֆլիսի հասարակութեան շահերի համար, Թիֆլիսի Ջրմուղի գրասենեակը թախանձագին խընդրում է ամենքին՝ քաղաքային Ջրմուղի պատահական անճշդութիւնների համար անմիջապէս իրեն յայտնել և գանգատուել։ Այդ ճանապարհով միայն հնարաւոր է ուղղել ինչպէս քաղաքային Ջրմուղի այն անճշդութիւնները, որոնք յաճախ կարող են վրիպել Ջրմուղի ծառայողների ուշադրութիւնից, նոյնպէս և բնակիչների զուր վրդովմունքը, որ առաջանում է լրագիրների շատ անգամ սխալ լուրերից, որոնք հիմնուած են չստուգուած կամ մինչև անգամ առասպելական փաստերի վրայ։

1—1

ՔՈՒԹԱՅԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Համար հարկաւոր է Ե. ԿԱՐԻՒ ուսուցիչ ռուսաց լեզուից, թուաբանութիւնից և գծագրութիւնից։ Ռոճիկը Ա. կոպարով։ Դիմել այսօր «Նոր-Դարի» խմբագրութեանը

Աւագ ուսուցիչ՝ Գր. Խրիմեանց.

1—1

Մ. Ա. ՍԵՐՊԻՆԷ-ԱՐԻՍՏՈՎԱՅԻ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻՈՆԸ,

որ օրիորդական պետական գիմնազիոնների իրաւունքներն ունի և գոյութիւն ունի նրանց հետ հաւասար հիմունքներով, տեղափոխեց ՐՏԻՇՉԵՒՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԸ, ՇՄԱԿՈՎԱՅԻ ՏՈՒՆԸ։ ԱՄԵՆ ՕՐ ԲՈԼՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՅ։ Ուսումը սեպտեմբերի 1-ից կը սկսուի։ Գիմնազիոնին կից պանսիօն կայ, որտեղ գիշերօթիկ աշակերտուհիներ են ընդունուում։ Գտնելով նոյն ուսումնական-կրթական նպատակներին, ինչ պէս և գոյնանման միւս ուսումնարանները, պանսիօնը առանձնապէս հոգս է տանում նոր լեզուների և երաժշտութեան դասատուների։

3—1

Դ. կարգի ՈՒՍՈՒՑԻՉ ատարած Ս. Էջմիածնի Դէորգեան ճեմարանի Զ. դասարանն ունի ուսուցչութեան իրաւունք, ցանկանում է հայոց ուսումնարաններում դասեր ունենալ լեզուներից և միւս առարկաներից։ Դիմել «Նոր Դարի»-ի խմբագրութեանը։

5—1

BATEAUXV VAPEUR FRANÇAIS A. PAQUET ET C-IE.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՔԷԸՆ ԵՒ Կ.

Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէլից Բաթում երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, սկսած չորեքշաբթի, ապրիլի 4/16-ից և Բաթումից Մարսէյլ, մանելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը, սկսած հինգշաբթի, 26 օգոստոսի 28 սեպտեմբեր։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Հինգշաբթի 16/23 օգոստոսի չորեքշաբ. «Անատոլի» կապիտան Դարբիզ
» 30 օգոստոսի /11 սեպտեմբերի » «Սերկասսի» » Բօչել
» 13/25 սեպտեմբերի » «Մինգրէլիա» » Փրատէն
» 27 սեպտեմբերի /9 հոկտեմբերի » «Անատոլիա» » Դարբիզ

Տեղեկութիւնների համար քեռների և ճանապարհորդների մանրամասն բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում ՉԻ ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաբէրեժնայա, Թիֆլիսում՝ պ. Վիկտոր դ'Արնօին Մին փողոց, գեներ. Տէր Աստուածատուրեանի նախկին տունը։ 10—5



Дозволеноцензурою. Тифлисъ, 31-го Августа 1890 г. Կաւկազ լրագրի գրասենեակի Տպարան Типографія конторы газеты Кавказъ, Гол.-пр., д Читахова.